# Ո՞Վ Է ՎԵՐՋՈՒՄ ՓԱԿԵԼՈՒ ԴՈՒՌԸ ...

Իսրայելցիներ, դուք այսօր մոտեցել եք պատերազմի ձեր թշնամիներին, և թող ձեր սրտերը չթուլանան, մի վախեցեք, մի զարհուրեք նրանցից և նրանց հայացքներից մի դողացեք, որովհետև Եհովա աստվածը ձեզ հետ է, ձեզ հետ գնում է ձեր թշնամիների դեմ պատերազմի:

Եվ ոստիկանները խոսեցին ժողովրդի հետ, ասելով. «Ով է այն մարդը, որ նոր տուն է կառուցել, և նավակատիքը չի արել, թող ետ դառնա, գնա իր տունը, գուցե պատերազմում մեռնի, և մեկ ուրիշը անի նավակատիքը:

Եվ ով է այն մարդը, որ այգի է տնկել և այն չի վայելել, թող ետ դառնա, գնա իր տունը, գուցե պատերազմում մեռնի, և մեկ ուրիշը վայելի բերքն ու բարիքը: Եվ ով է այն մարդը, որ նշանած է առել, թող ետ դառնա, գնա իր տունը, գուցե պատերազմում մեռնի, և մեկ ուրիշ մարդ առնե նրան...»:

*«Աստվածաշունչ»*



Լուսանկարները՝ Ա. ԵՐԱՄՏՇՅԱՆԻ



Ոչ ոք չհամարձակվեց հարցնել նրան. «Այդ ու՞ր ես գնում, Մարգարիտ, ու՞ր ես գնում այդպես անվրդով, այդպես անառագաստ՝ չմայրացած»: Չհարցրին, որովհետև նախօրոք գիտեին պատասխանը. «Ամեն ինչ իր ժամանակն ունի»:

Չհարցրին նրան, չհարցրին՝ փոքրիկներին տատի մոտ պահ տվածին, սիրահարվածին, լվացքը կիսատ թողածին: Գնացին կանայք, կազմեցին ջոկատ... Տղերից լավ էին կռվում՝ դիմացկուն էին ու անկոտրում: Նրանց հետ հեշտ էր կռվելը, հեշտ էր ու դժվար, նրանց հետ հնարավոր չէր պարտվել: Եվ կռվում էին, և վերքեր բուժում, սոված-ծարավածին հագեցնում էին փալիս. նրանք ոգին էին մարտիկի:

Նրանց ասացին. «Այդ ու՞ր եք գնում, աղջիկներ, այդ ու՞ր եք գնում դեռ զավակի ճիչ չլսած»: Բազում մարտերից հետո ոմանք նորից դարձան իրենց տները՝ ամուսնանալու, խնամելու փոքրիկներին, կիսատ թողած լվացքը վերջացնելու:

Ոմանք էլ ետ չեկան. Մարգարիտը, Անահիտը, Կարինեն... Մնացին շարունակելու սկսած գործը՝ փաթաթելու վիրավորների վերքերը, մնացին, որ տղերքը հեշտ կռվեն...

## ՄԱՐԳԱՐԻՏԸ

Ապրում էր Ստեփանակերտում: Սիրում էր իր փոքրիկ թաղամասը և ծանոթներին... Բայց 92-ին դատարկվեց քաղաքը, մնացին միայն տղամարդիկ և փոքրաթիվ կանայք, ովքեր անփախուստ ապրեցին: Եվ ավերված քաղաքը կարծես դարձավ ավելի սիրելի, ավելի գեղեցիկ ու անառիկ: Դատարկվեց նաև իր տունը: Մարգարիտը մնաց մենակ: Մարտից հոգնած գալիս էր տուն և զրույցում... հուշերի հետ, հուշ դարձած ծանոթների, նրանց նկարների հետ...

Հետո գալիս էին քաղաքը չլքած ընկերուհիները, հուշերի հետ զրույցը դառնում էր կենդանի, և գիշերը կարճանում-դառնում էր բառի չափ... Իսկ մի քանի օրից կրկին փակվում էին տան դռները և... Եվ ոչ ոք չէր համարձակվում հարցնել. «Այդ ո՞ւր ես գնում, Մարգարիտ, ու՞ր ես գնում այդպես...»: Հրաժեշտ էին տալիս, մի քիչ արտասվում, որ դարձյալ հանդիպեն:

Մինչդեռ այնտեղ ճռնչում էին զրահամեքենաները, որոտում հրանոթները, ցավից տնքում էին մարմինները, ժամանակն անեւ տրոփում էր խրամատներում: Մարգարիտի արձակած գնդակից դիպասպար ընկնում էր թշնամին, և դաշտերն ու ձորերը լցվում էին զարկված վայրենու ոռնոցով, խելագար կականով: Մարգարիտն ամեն անգամ մարտից առաջ բարձրաձայն մտածում էր մահվան մասին ու ծիծաղում հեգնանքով. «Թքած, ամեն ինչ ժամանակավոր է: Մեռնելն էլ ապրելու մի ձև է, միայն ափսոս, որ աշխարհը չի զգում քո պակասը, և թվում է՝ այդպիսի մարդ երբեք էլ չի ապրել աշխարհում... Իսկ ապրելն իսկապես դժվար է: Ապրողներն են գրելու կյանքի օրենքը՝ դաժան օրենքը: Բայց միայն ասծո ընտրյալներն են կարդալու արնոտ ձեռագիրը: Իսկ բազմությունը միայն գոռում է, աղմկում, բազմությունը չի կարդում: Եվ պաշարվում են խղճի և ոգու դղյակները, և այնժամ մոտենում է անիմաստ մահը»: Մարգարիտը դրանից էր վախենում:

Մանկավարժ էր: Երազում էր դպրոց գնալ, ուսուցչությամբ պարապել. մանուկներին երեխավարի փնտրել ու կրթել, մի քիչ կանգնել կանանց կողքին, դժգոհել բազում հոգսերից, բայց գիտեր, որ ինքը երբեք էլ չէր դժգոհելու:

Պատերազմը փոխել էր նրա կանացի դիմագծերը, զինավարժ ձեռքերը պատվել էին կոշտուկներով, ձայնն այլևս կանացի չէր: Միայն առաջվա պես նույն կարականերն էր: Կապաղի էր մարտը՝ անհավասար: Վիրավորներ կային՝ զոհեր: Ծանր վիրավորվեց Կարինեն: Մարգարիտը նրան հասցրեց հոսպիտալ և էլի միացավ տղերքին: Եվ, երբ նրա հրացանը որոնում էր դարան մտած թուրքին, խոցվեց անօրենի գնդակից:

Հիշում եմ՝ մի անբացատրելի տխրություն կար աչքերում: Քիչ ավելի երկար կանգնեց դռան շեմին ու ասաց. «Եթե զոհվեմ, գերեզմանիս շատ ծաղիկներ կդնեք»:

Ինձ համար երբեք այդքան դժվար չէր եղել հանգույցային վերջին հանգրվան ճանապարհելը, բայլում էի մեղավորի պես, թվում էր՝ բոլորն են մեղավոր: Միայն մեկը համարձակվեց հարցնել. «Այդ ու՞ր ես գնում, Մարգարիտ...»: – Մայրն էր:

Իսկ մարդիկ շշուկով միմյանց հարցնում էին:

– Ո՞վ է զոհվել:

– Մի աղջիկ:

– Աղջի՞կ: Աստված իմ, ինչ սարսափելի է...

– Սովորել էինք տղերք կորցնելուն, Աստված ձի արձակեն, որ սրան էլ սովորենք:

Հետո, ինչպես Մարգարիտն էր խնդրել, գերեզմանին շատ ծաղիկներ դրեցին, համբուրեցինք շիրմաքարն ու խոստովանության բառեր մրմնջացինք:

Մարգարիտը վախենում էր մահից...

Իսկ հիմա պարզապես խնդրում եմ. մեկ րոպե լռություն...

ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(Արցախ)